ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՍԵՑՈՒՄԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

13.02.2023թ. ԵԴ/59354/02/22

ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Լ.Գրիգորյանս քննարկելով հայցվոր ՀՀ ոստիկանության ներկայացուցչի կողմից ներկայացված գնման գործընթացի կասեցման որոշումը վերացնելու մասին միջնորդությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Դատարանի վարույթում է քննվում քաղաքացիական գործն ըստ հայցի «ՍՕՍ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊ ընկերության ընդդեմ Հայաստանի Հանրապետություն՝ ի դեմս ՀՀ ԿԱ ոստիկանության՝ մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելու, այն է՝ «ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-2023-ՊՊԳՎ/ԳԼՈԲԱԼ/Ա-2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ հայտարարելը անվավեր ճանաչելու պահանջի վերաբերյալ:

09.02.2023 թվականին պատասխանողի ներկայացուցիչը գնման գործընթացի կասեցման որոշումը վերացնելու մասին միջնորդություն ներկայացրել դատարան, հայտնելով, որ համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11-րդ հոդվածի՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների (բացառությամբ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների) բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:

ՀՀ ոստիկանության պետի 2015թ. դեկտեմբերի 17-ի թիվ 3045-Ա հրամանով հաստատված ՀՀ ոստիկանության պահպանության գլխավոր վարչության /այսուհետ՝ Վարչություն/ կանոնադրության 2-րդ կետի համաձայն՝ Վարչությունը իր ենթակայության տակ գտնվող ստորաբաժանումների ուժերով պետական բյուջեի միջոցների հաշվին, ինչպես նաև պայմանագրային հիմունքներով կազմակերպում է ՀՀ կառավարության կողմից հաստատված պետական պահպանության ենթակա, ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց պատկանող այլ օբյեկտների պահպանությունը, գույքի և անձի անվտանգության հետ կապված վճարովի ծառայությունների մատուցումը, այդ թվում նյութական արժեքների /բեռների/ ուղեկցումը ՀՀ տարածքում:

Հայտնել է, որ «ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-2023-ՊՊԳՎ/ԳԼՈԲԱԼ/Ա-2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնման առարկան է հանդիսանում «Տեղեկատվության փոխանցման և տագնապների ազդարարման կենտրոնացված համակարգը»: Վերոնշյալ գնման գործընթացի կասեցումը

խաթարելու է շուրջ 2897 օբյեկտների, այդ թվում 452 բանկերի և բանկային մասնաճյուղերի պահպանության և անվտանգության ապահովումը:

Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Այն դեպքերում, երբ, հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերից ելնելով, անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը, դատարանը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված մարմինների ղեկավարների, իսկ իրավաբանական անձանց դեպքում գործադիր մարմնի ղեկավարի գրավոր միջնորդության հիման վրա կայացնում է գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին որոշում: Դատարանը սույն մասով նախատեսված որոշումը դրա կայացման օրն անհապաղ ուղարկում է «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին: Լիազորված մարմինն այդ որոշումն անհապաղ հրապարակում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված տեղեկագրում:

Ելնելով վերոգրյալից միջնորդել է՝ վերացնել «ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-2023-ՊՊԳՎ/ԳԼՈԲԱԼ/Ա-2» ծածկագրով գնման գործընաթցի կասեցման մասին որոշումը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11 հոդվածի համաձայն՝ 1. Պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների (բացառությամբ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների) բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:

2. Այն դեպքերում, երբ, հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերից ելնելով, անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը, դատարանը «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված մարմինների ղեկավարների, իսկ իրավաբանական անձանց դեպքում գործադիր մարմնի ղեկավարի գրավոր միջնորդության հիման վրա կայացնում է գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին որոշում: Դատարանը սույն մասով նախատեսված որոշումը դրա կայացման օրն անհապաղ ուղարկում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին: Լիազորված մարմինն այդ որոշումն անհապաղ հրապարակում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված տեղեկագրում:

Քննության առնելով միջնորդությունը, գտնում եմ, որ այն ենթակա է բավարարման, նկատի ունենալով, որ գնման գործընթացը վերաբերում է տեղեկատվության փոխանցման և տագնապների ազդարարման համակարգին, որը անվտանգային և հանրային կարևորություն ունի, ուստի կասեցումն անհրաժեշտ է վերացնել:

Շարադրվածն ընդունելով հիմք և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11-րդ, 199-րդ և 200-րդ հոդվածներով, դատարանը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

Միջնորդությունը բավարարել:

Վերացնել «ՀՀ Ո ԷԱՃՇՁԲ-2023-ՊՊԳՎ/ԳԼՈԲԱԼ/Ա-2» ծածկագրով գնման գործընթացի կասեցման մասին որոշումը:

Դատարանը որոշումը կայացման օրն անհապաղ ուղարկում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին:

ԴԱՏԱՎՈՐ՝ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ